11:46 17/04/2013 » Հասարակություն

www.armin.am. Հայագիտության մասին ամեն ինչ

Վաղը տեղի կունենա ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի թեմատիկ կայքերի շնորհանդեսը: Ինստիտուտից տեղեկացնում են, որ 2012թ.-ին նախագծվել և համացանցային կիրառման են ներկայացվել ինստիտուտի թվով 7 թեմատիկ կայքերը Հայոց ցեղասպանության, հայոց պատմության, հնագիտության, հայոց լեզվի, մշակույթի, կրոնի, սփյուռքի վերաբերյալ: Կայքերում կարելի է գտնել, դիտել և անվճար ներբեռնել հայագիտական համապատասխան թեմատիկ ուղղություններին առնչվող ոչ միայն դասական ու հայտնի գիտական աշխատանքներ, այլ նաև նոր հրապարակումներ, փաստաթղթեր, քարտեզներ, լուսանկարներ ու տեսանյութեր:

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտն իրականացնում է հայագի¬տական ուղղվածության հետազոտություններ, հրատարակում ուսումնասիրություններ, իրականացնում պրոֆեսիոնալ թվայնացում և համացանցային պաշարներում հիշյալ նյութերի ներկայացվածության ապահովում: Կատարված աշխատանքը շարունակաբար ներկայացվում է ինստիտուտի պաշտոնական կայքում՝ www.armin.am-ում, այդ թվում նոր կայքերում, որոնցում արդեն առկա են շուրջ 366 գրքեր, 1000 հանրագիտարանային գիտահանրամատչելի հոդվածներ, 168 գիտական հոդվածներ, շուրջ 340 քարտեզներ, 110 արխիվային փաստաթղթեր, պատմական տարաբնույթ լուսանկարներ: ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը համագործակցում է ինչպես առանձին հայագետների, այնպես էլ հայագիտական գիտահետազոտական այլ կենտրոնների և ինստիտուտների հետ:

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը հիմնադրվել է 2008 թ.-ին: Այն ունի թվով 8 ստորաբաժանում՝ «Հնագիտական հետազո¬տությունների լաբորատորիա», «Ցեղասպանագիտության բաժին», «Հայ-օսմանական առնչությունների բաժին», «Ադրբեջանագիտության հայկական կենտրոն», «Վրացագիտության հայկական կենտրոն», «Աղբյուրագիտական լաբորատորիա», «Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժին», «Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիա» (տե՛ս՝ www.armin.am):

Աղբյուր՝ Panorama.am



Մեկնաբանություն ավելացնել...

Հրապարակել նաև Ֆեյսբուքում

Գրառել որպես Elena Zohrabyan (Փոխել) Մեկնաբանել

Ֆեյսբուքի սոցիալական հավելված

Ամենից շատ կարդացված նյութեր

- 09:20 • 07/11
  Մանկավարժական համալսարանի հաշվապահը յուրացրել է առանձնապես խոշոր չափի գումար
- 09:32 • 07/11
  Ներսիկ Նազարյանի գործերը վատ են. «ՉԻ»
- 09:37 • 07/11
  «Քարֆուր»-ի բացումը լարված իրավիճակ է ստեղծել տեղացի արտադրողների և մատակարարների մոտ. «Հայկական ժամանակ»
- 09:44 • 07/11
  Տեր-Պետրոսյանին Ծառուկյանի փողն է պետք, ոչ թե խելքը. «Իրատես de facto»
- 09:25 • 07/11
  Նախագահը կոնֆիդենցիալ հանդիպումներ կունենա Մոսկվայում. «Հրապարակ»